

Փոխառուի գնահատական՝ կախված նրա կանոնադրական հիմնադրամի հետ կանոնադրական հիմնադրամը փոքր է վարկի ընդհանուր գումարի 20%-ից՝ 0 միավոր, կազմում է վարկի 20 -50%-ը՝ 5 միավոր, կազմում է վարկի 50 -100%-ը՝ 10 միավոր:

Վերը նշված առանձին չափանիշների գնահատականների գումարի միջոցով տրվում է փոխառուի վարկունակության դասը: Ստորև բերվող աղյուսակում ներկայացնենք դասային բաժանման սահմանաչափերը՝

Աղյուսակ

Փոխառուի վարկունակության դասի որոշման աղյուսակ

Փոխառուի վարկունակության դասը	Միավորների ընդհանուր գումար
Ա դաս՝ վստահելի փոխառու	180 և ավելի
Բ դաս՝ աննշան ռիսկային փոխառու	140 – 180
Գ դաս՝ միջին ռիսկային փոխառու	100 – 139
Դ դաս՝ բարձր ռիսկային փոխառու	80 – 99
Ե դաս՝ լրիվ ռիսկային փոխառու	180 և ցածր

ՄԻՔԱՅԵԼ ԹԱՎԱԴՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս, տ.գ.թ., դոցենտ

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից շուկայական տնտեսության զարգացման գործընթացը ենթադրում է աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված ապրանքների և ծառայությունների փոխշահավետ փոխանակություն: Ընդհանուր դրան ուժեղանում է ազգային տնտեսությունների փոխկապվածությունն ու փոխալսամանավորվածությունը: Աշխատանքի միջազգային բաժանումը բարիքների արտադրությունը տրոհելով բազմաթիվ մասնագիտացված ոլորտների, օբյեկտիվորեն անհրաժեշտ է դարձնում արտադրության սուբյեկտների տնտեսական փոխգործունեությունը տարբեր երկրների միջև: Ընդ որում, ինչքան ավելի է խորանում աշխատանքի միջազգային բաժանումը, այնքան ավելի է անխուսափելի դառնում ազգային տնտեսությունների (երկրների) փոխգործունեության պահանջը: Այդ պահանջը չի վերաբերվում միայն արտաքին առևտրական հարաբերություններին, այլ նաև կապիտալ ներդրումներին, դրամական միջոցներին և այլն:

Այսպիսով, աշխատանքի միջազգային բաժանման համակարգի մեջ ընդգրկված երկրների համագործակցության շնորհիվ ապրանքների, ծառայությունների, ֆինանսների միջազգային շուկաները սերտորեն միաձուլվում են միմյանց հետ և էապես ազդում տվյալ երկրի ընդհանուր զարգացվածության վրա: Վերջինիս ուսումնասիրությունների իրականացման համար կարևոր միջոց է համդիսանում վճարային հաշվեկշիռը:

Վճարային հաշվեկշիռը մի փաստաթուղթ է, որտեղ արտագոյվում են բոլոր վճարումները (ծախսերը) և մուտքերը (եկամուտները) արտաքին տնտեսական գործունեությունից որոշակի ժամանակահատվածի համար (ամիս, եռամսյակ, տարի):

Սահմանումից պարզ երևում է, որ վճարային հաշվեկշիռը արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆինանսների հետ կատարվող արտաքին տնտեսական գործարքները, որոնք իրականացվում են տվյալ երկրի ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև որոշակի ժամանակահատվածում:

Վճարային հաշվեկշիռը արտացոլում է ոչ թե անհատական գործարքներ, այլ համախառն գործարքներ տվյալ երկրի և այլ երկրների միջև: Քանի որ վճարային հաշվեկշիռը արտացոլում է տվյալ երկրի վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, ուստի այն մակրոտնտեսական քաղաքականության մշակման կարևոր կողմնորոշիչ է դառնում: Բացի դրանից, այն մակրոտնտեսական վերլուծության և կանխատեսման գործիքներից մեկն է: Դրա օգնությամբ հնարավոր է դառնում պարզելու արտաքին առևտրի զարգացման վիճակը ընթացիկ տարում:

Այսպիսով, վճարային հաշվեկշիռը ունի բավականին բարդ բովանդակություն, որն էլ պայմանավորում է դրա վերաբերյալ տարբեր տնտեսագիտական տեսությունների գոյությունը: Դրանք էական դեր են խաղում վճարային հաշվեկշիռի կարգավորման գործում: Վճարային հաշվեկշիռի տեսությունները անցել են զարգացման երկար ճանապարհ: Այսպես, շուրջ 200 տարի՝ մինչև XX դարի 30-ական թվականները, տիրապետող է եղել վճարային հաշվեկշիռի ավտոմատորեն ինքնակարգավորման տեսությունը: Այդ տեսության հիմքերը մշակել են անգլիացի գիտնականներ Դ.Յունը և Դ.Ռիկարդոն: Համաձայն այդ տեսության՝ պասիվ վճարային հաշվեկշիռի դեպքում շրջանառության մեջ եղած ոսկյա փողերի քանակը նվազում է, և իջնում են գները այն երկրում, որտեղից ոսկին արտահանվել է: Արդյունքում բարձրանում է տվյալ երկրի ապրանքների մրցունակությունը, աճում է արտահանումը և դրանով իսկ ակտիվանում է երկրի միջազգային հաշվարկների հաշվեկշիռը: Մյուս կողմից էլ ոսկու հոսքը դեպի երկիր մեծացնում է շրջանառության մեջ եղած փողի քանակը, որն էլ ըստ փողի քանակային տեսության կողմնակիցների, հանգեցրել է գների աճին և խթանել առավել էժան արտասահմանյան ապրանքների ներմուծումը: Այսպիսով, ոսկու տարերային տեղափոխման և գների փոփոխության արդյունքում ակտիվ վճարային հաշվեկշիռը վերածվում է պասիվի: Այս տեսությունը գերիշխող է եղել ոսկու ստանդարտի դարաշրջանում: Ոսկու ստանդարտի վերացման հետ միասին այդ տեսությունն էլ պատմության գիրկն անցավ: Սակայն պետք է նշել, որ վերջին ժամանակները այդ տեսության նկատմամբ հետաքրքրությունը նորից ակտիվացել է: Եթե նախկին պայմաններում ավտոմատ կարգավորման դերը իր վրա էր վերցրել

«Պահուստային ակտիվների» հոդվածը, ապա այժմ լողացող արժույթային փոխարժեքի պայմաններում այդպիսի ավտոմատ կարգավորող, մասամբ, դառնում է ազգային արժույթի լողացող փոխանակային արժեքը, որը ընկնում է վճարային հաշվեկշռի վիճակի վատթարացման ժամանակ և մեծանում է դրա բարելավման ժամանակ: Դա էլ ավտոմատ ձևով տանում է շատ ընթացիկ գործառնությունների փոփոխմանը և մասամբ էլ կապիտալի շարժմանը:

Վճարային հաշվեկշռի նոր դասական տեսությունը: Դասական տեսությունը ելնում էր նրանից, որ վճարային հաշվեկշռի հիմնական տարրը տվյալ երկրի ապրանքների և ծառայությունների ներմուծման և արտահանման ծավալների հարաբերակցությունն է: Դա կախված է տեղական և օտարերկրյա ռեզիդենտների վարքագծից, որոնք հնարավորություն ունեն ընտրություն կատարելու տեղական և օտարերկրյա ապրանքների միջև: Ազգային կամ արտասահմանյան ապրանքների գնման որոշումը ընդունվում է, ամենից առաջ, գների համեմատման ժամանակ: Այլ կերպ ասած, դասական տեսությանը համաձայն՝ վճարային հաշվեկշռի վճռորոշ ազդակ է հանդիսանում համեմատաբար միատիպ ապրանքները և արժույթի փոխանակային արժեքը: Նման մոտեցման պայմաններում էական դեր է խաղում պահանջարկի առաձգականությունը՝ կախված գներից: Եթե պահանջարկի առաձգականությունը մեկից մեծ է, ապա վաճառված ապրանքների քանակի տոկոսային մեծացումը բարձր է ստացվում քան գների իջեցումն է: Եթե այն փոքր ստացվի, ապա գների իջեցման ժամանակ մուտքերի ընդհանուր գումարը կփոքրանա, որովհետև վաճառվող ապրանքների լրացուցիչ պատվերը անբավարար է լինում միավոր արտադրանքի գնի իջեցումից փոխհատուցման համար:

Նոր դասական տեսության հիման վրա կարելի է եզրակացնել, որ վճարային հաշվեկշռը կբարելավվի այն ժամանակ, երբ ներմուծվող ապրանքների գների առաձգականության գումարը ռեզիդենտների համար և արտահանվող ապրանքներինը ոչ ռեզիդենտների համար կգերազանցի մեկին: Նշենք, որ նոր դասական տեսությունը կամ առաձգականության մոտեցման տեսությունը մշակվել են Ջ.Ռոբինսոնի, Ա.Լերների և Լ.Մեցլերի կողմից: Համաձայն նշված հեղինակների կարծիքի, վճարային հաշվեկշռի առանցքը արտաքին առևտուրն է և առևտրային հաշվեկշռի հաշվեմացորդը որոշվում է, նախ և առաջ, արտահանվող ապրանքների գների մակարդակը բազմապատկելով արժույթի փոխարժեքով: Ստացվում է, որ վճարային հաշվեկշռի հավասարակշռության ապահովման առավել արդյունավետ միջոց է արժույթի փոխարժեքի փոփոխությունը: Բանն այն է, որ ազգային արժույթի դեվալիվացիան իջեցնում է արտահանման գները օտարերկրյա արժույթով, իսկ ռեվալիվացիան՝ արտասահմանյան գնորդների համար թանկացնում է տվյալ երկրից ապրանքների ձեռքբերումը և էժանացնում սեփական ռեզիդենտների համար արտասահմանյան ապրանքների ներմուծումը:

Այդ փոփոխությունների աստիճանը արտասահմանյան պահանջարկում երկրի արտահանման համար և հայրենական պահանջարկում ներմուծման համար որոշվում է արտահանման և ներմուծման պահանջարկի առաձգականության գործակցով: Սա պետք է հաշվի առնել փոխանակային արժեքի փոփոխության ժամանակ: Այսպես երկրին անհրաժեշտ ապրանքների ներմուծումը, որոնք չեն արտադրվում նրանում, օժտված է ոչ մեծ առաձգականությամբ համեմատած այն ներմուծման հետ, որը մրցում է տեղական ապրանքների հետ:

Ներքին և արտաքին հավասարակշռության տեսությունը: Ներքին հավասարակշռության տակ ենթադրվում է տնտեսության այնպիսի վիճակ, երբ լրիվ զբաղվածությունը զուգակցվում է կայուն գների հետ, իսկ արտաքինի տակ՝ վճարային հաշվեկշռի կայուն, երկարաժամկետ հավասարակշռություն:

Այդ տեսության կողմնակիցները ձգտել են հավասարակշռության ձեռքբերման մեթոդներ մշակել, որի համար օգտվել են տնտեսագիտական մոդելներից: Այսպես Ջ.Միլը, Յա.Թիմբերգենը և ուրիշները վճարային հաշվեկշռի կարգավորման տնտեսագիտական մոդելների մշակման համար առաջարկել են պետության տնտեսական քաղաքականության ցուցանիշները պայմանականորեն բաժանել գործիքների և նպատակների: Դրանք սահմանափակում են երկրի միջազգային հաշվարկների անհավասարակշռվածության և համապատասխան դրամավարկային, բյուջետային և արժույթային կարգավորման մեթոդների փոփոխության միջև պատճառական փոխկապերին հայտնաբերման վերլուծությունը:

Վճարային հաշվեկշռի գործիքային-նպատակային մեթոդի վերլուծությունը հակասության մեջ է մտնում տնտեսության պետական կարգավորման ուրիշ մեթոդների հետ, որն էլ սահմանափակում է դրա գործնական կիրառությունը: Այսպես տնտեսական աճի խթանման միջոցները սովորաբար բացասական ազդեցություն են ունենում վճարային հաշվեկշռի վրա, իսկ «թանկ փողերի» քաղաքականության օգտագործումը, այսինքն վճարային հաշվեկշռի վիճակի բարելավման համար հաշվարկային դրույթի բարձրացումը բացասաբար է անդրադառնում ներքին արտադրության և զբաղվածության վրա, այլ հավասար պայմանների դեպքում: Ընդհանրապես վճարային հաշվեկշռի կարգավորման նշված մեթոդը սահմանափակված է սոցիալական, տնտեսական, տեխնիկական սահմաններով: Այսպես տոկոսադրույթի բարձրացումը միշտ չէ ներգրավում արտասահմանյան կապիտալները, իսկ տոկոսադրույթի բարձրացումը այլ երկրներում կարող է չեզոքացնել նման քաղաքականության էֆեկտը:

Այս տեսության ծագումը մեկ անգամ ևս վկայում է այն բանի մասին, որ միջազգային տնտեսական հարաբերությունները ունեն բարդ և բազմաբնույթ բովանդակություն, որի պատճառով էլ տնտեսագետ տեսաբանները դժվար հիմնախնդիրների առաջ են կանգնում:

Վճարային հաշվեկշռի մոնետարիստական տեսությունը: Բավականին տարածված տեսություն է, որտեղ հիմնական ուշադրությունը ուղղված է դրամական գործոններին, և ամենից առաջ, վճարային հաշվեկշռի հաշվեմացորդի ազդեցությունը երկրի դրամաշրջանառության վրա: Ըստ մոնետարիստների, եթե փողի շուկայում իշխող է անհավասարակշռությունը, ապա դա էլ պատճառ է դառնում վճարային հաշվեկշռի անհավասարակշռության: Այսպես, եթե պետությունը կրճատում է թողարկվող դրամական միջոցների քանակը, ապա խանգարվում է մասնավոր սեկտորի հավասարակշռությունը, որովհետև դրա առկա միջոցները պահանջվածի նկատմամբ քիչ են ստացվում: Ուստի, ֆիզիկական անձիք ձգտում են խախտված

հավասարակշռությունը վերականգնել ընթացիկ ծախսերի կրճատման և հիմնական միջոցների վաճառման միջոցով: Արդյունքում երկրում առաջանում են ապրանքների և հիմնական միջոցների ավելցուկ: Հետևաբար գներն են իջնում:

Ըստ միջազգային մոնետարիզմի տեսաբանների՝ երբ լրացուցիչ ապրանքներ ու հիմնական միջոցներ են դուրս բերվում շուկա, ապա արտասահմանյան գնորդները դրանք անմիջապես գնում են: Հետևաբար ոչ միայն թողարկումը չի կրճատվում, այլ նաև գները չեն իջնում: Եթե կառավարությունը մեծացնում է դրամական միջոցների թողարկումը, ապա օտարերկրյա արտադրողները կբավարարեն առաջարկը համապատասխան ապրանքներով: Ազգային ապրանքների պակասուրդը կփոխհատուցվի ներմուծված ապրանքներով: Ուստի, ավելցուկային դրամական պահանջարկի վերակողմնորոշումը դեպի արտասահմանյան ապրանքների ներմուծումը կարող է հանդիսանալ որպես վճարային հաշվեկշռի պակասուրդի պատճառ:

Ծախսերի կրճատման պատճառով դրամական միջոցների անբավարարվածության դեպքում տեղի կունենա արտահանման ընդլայնում, արդյունքում վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը կդառնա դրական:

Փաստորեն մոնետարիստները ելնում են նրանից, որ վճարային հաշվեկշռի հավասարակշռության խախտումը պայմանավորված է շրջանառության ոլորտը ավելցուկ դրամական միջոցների գերհագեցմամբ, քան իրականում պահանջվում է: Եթե փողի ավելցուկը գերազանցում է թույլատրելի սահմանը, ապա առաջանում է վճարային հաշվեկշռի պակասուրդ:

Բացի դրանից, մոնետարիստները գտնում են, որ երկրի վճարային հաշվեկշռի պակասուրդը կարող է պայմանավորված լինել նաև տվյալ երկրի փողի նկատմամբ պահանջարկի մեծացմամբ, որն օգտագործվում է որպես պահուստային արժույթ:

Մեր կարծիքով, մոնետարիստական տեսության տարբերությունը նոր դասականից կայանում է նրանում, որ այն վճարային հաշվեկշռը ուսումնասիրում է ոչ թե որպես ապրանքների ու ծառայությունների շարժ, այլ որպես դրամաֆինանսական երևույթ: Ըստ մոնետարիստների՝ վճարային հաշվեկշռի հավասարակշռման կամ դրա խախտման գործում վճարական նշանակություն է ձեռք բերում դրամաշրջանառությունը, որն էլ հաշվեկշռի խախտման ժամանակավոր երևույթ է հանդիսանում:

Կարճ ասած՝ վճարային հաշվեկշռի մոնետարիստական տեսաբանների երազանքը «բաց» տնտեսությունն է, ապրանքների, աշխատուժի, կապիտալների նվազագույն սահմանափակում, ինչպես նաև շուկայական մեխանիզմի ազատ գործողության ապահովումը ազգային և համաշխարհային տնտեսությունների շրջանակներում:

Մեծ տնտեսական ճգնաժամը (1929-1933թթ.) ցույց տվեց, որ շուկայական մեխանիզմը ի վիճակի չէ լուծելու ներքին և արտաքին հակասությունները: Ավելին, մինչ այդ գոյություն ունեցող տնտեսությունները, որոնք գտվեցին էին շուկայական մեխանիզմի ինքնակարգավորման գործողությունը, չկարողացան բացահայտել տեղի ունեցող երևույթների պատճառները: Ինքնակարգավորվող շուկայական մեխանիզմի հավասարակշռվածությունը քարոզող նոր դասական տնտեսություններին փոխարինելու եկավ, այսօր էլ իրենց նշանակությունը պահպանող, տնտեսագիտական տեսության բազմաթիվ ուղղություններ, որոնցից հիշատակման է արժանի քեյնսականությունը, որը հիմնված է անգլիացի տնտեսագետ Ջ.Մ.Քեյնսի (1883-1946թթ.) և նրա հետնորդների ուսմունքների վրա: Նրանք առաջարկում են տնտեսական գործընթացներին պետության միջամտության միջոցառումների մի ամբողջ համակարգ: Ջ.Մ.Քեյնսի համրահայտ աշխատության՝ «Ջրաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» (1936թ.) հրապարակումից հետո պարզ դարձավ, որ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի հավասարեցումը երկարաժամկետում տեղի է ունենում ինչպես հարաբերական գների հաշվին, այնպես էլ եկամուտների և զբաղվածության մակարդակների տեղաշարժերի հետևանքով, հետևաբար նաև արդյունավետ պահանջարկի հաշվին: Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի հավասարեցման սխեման քեյնսյան և դասական մոտեցումների տեսանկյունից կարելի է ցույց տալ ներքոհիշյալ աղյուսակի միջոցով:

Աղյուսակ

Ընթացիկ հաշվեկշռի հաշվեմնացորդի հավասարեցման քեյնսյան և դասական ավտոմատ մեխանիզմների համեմատական վերլուծությունը

Քեյնսյան մեխանիզմ	Դասական մեխանիզմ
1. Եկամուտների ներհոսք, Բ երկրի տնտեսություն և ազգային եկամտի արտահոսք Ա երկրից:	1. Փողի արտահոսք Ա երկրից և ներհոսք Բ երկրի տնտեսություն:
2. Բ երկրում ազգային եկամտի մեծացումը բերում է Բ երկրի արդյունավետ պահանջարկի մեծացմանը:	2. Բ երկրում դրամական զանգվածի մեծացումը հանգեցնում է գների աճին այդ երկրում:
3. Բ երկրում ամբողջական պահանջարկի մեծացման հաշվին մեծանում է ներմուծված ապրանքների նկատմամբ պահանջարկը:	3. Բ երկրում արտադրված ապրանքների գների բարձրացման հաշվին համանման ապրանքների նկատմամբ պահանջարկը, որոնք արտադրվում են երկրում, աճում են:
4. Ներմուծված ապրանքների նկատմամբ պահանջարկի մեծացման հաշվին տեղի է ունենում ներմուծման մեծացում Բ երկիր և վճարային հաշվեկշռի հավասարեցում:	4. Ներմուծված ապրանքների նկատմամբ պահանջարկի մեծացման հաշվին տեղի է ունենում ներմուծման մեծացում Բ երկիր և վճարային հաշվեկշռի հավասարեցում:

Բանն այն է, որ մի շարք երկրների օրինակով լողացող և ֆիքսված արժույթային փոխարժեքների պայմաններում ցույց է տրվել, որ երկարաժամկետում արտաքին առևտրի հաշվեկշռի հաշվեմնացորդի փոփոխությունը հաստատվում է վիճակագրական տվյալներով: Բացի դրանից նետո-արտահանող երկրներում պահանջարկի առաձգականության որոշման նշանակությունը բավականին ցածր էր:

Այսպիսով, անհրաժեշտ դարձավ վճարային հաշվեկշռի վերլուծության դասական մոտեցման մեջ կատարել հարաբերական գների փոփոխության վերլուծություն:

Այլ կերպ ասած՝ այն, ինչը որ դասական մոդելի մեջ բացատրվում է առկա գումարի հոսքերով և գների փոփոխմամբ, Քեյնսի մոդելի մեջ պայմանավորված են արդյունավետ պահանջարկի փոփոխությամբ: Քեյնսյան մեխանիզմի հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ արդյունավետ պահանջարկը կարող է փոփոխվել, նույնիսկ, եթե գները մնում են անփոփոխ:

Դրա հետ միասին, տնտեսագիտության տեսության մեջ նոր հոսանքները բացահայտել են առաձգականության տեսանկյունից վճարային հաշվեկշռի վերլուծությանը նոր, ոչ կատարյալ մոտեցումներ. շուկաներում մասնակի հավասարակշռվածության մասին ենթադրություն, երբ վերլուծությունից բացառվում են պահանջարկի և առաջարկի փոփոխությունները, էֆեկտի մոդելում դրամական ոլորտի լրիվ բացակայությունը և այլն: Ժամանակին վճարային հաշվեկշռը համարվում էր որպես բարդ երևույթ, որի վերլուծությունը շուկայի մասնակի հավասարակշռվածության հիման վրա տարրական պահանջներին չէր բավարարում: Դեռևս XX դարի 40-ից 50-ական թվականներին առաջարկվեց վճարային հաշվեկշռի վերլուծության նոր մոտեցում՝ ելնելով համախառն ներքին ծախսերի մեծությունից:

Այս մոտեցումը վճարային հաշվեկշռի հաշվեմացորդը քննարկում էր որպես երկրի ծախսերի և եկամուտների միջև տարբերություն և պնդում, որ ընթացիկ գործառնությունների հաշվի մնացորդը կարելի է մեծացնել միայն ծախսերը կրճատելով կամ եկամուտները մեծացնելով: Այսպիսով, ցանկացած տնտեսական քաղաքականություն, որն ուղղված է ազգային եկամտի մեծացմանը, չպետք է ուղեկցվի ներքին համախառն ծախսերի բարձրացմամբ: Արտաքին առևտրական հաշվեմացորդի կարգավորման գնային և քանակական միջոցառումների տնտեսական քաղաքականությունը կարող է ուղեկցվել ազգային արժույթի դեվալվացիայի, ներմուծման սակագների և քվոտաների, արտահանման սուբսիդիաների հետ կապված իրականացվող միջոցառումներով: Միաժամանակ ներքին համախառն ծախսերի կրճատման քաղաքականությունը չպետք է հանգեցնի ազգային եկամտի անկմանը:

Այսպիսի տնտեսական քաղաքականությունը կոչվում է տնտեսական սուբյեկտների ծախսերի ձևափոխման քաղաքականություն, որը ներմուծվող ապրանքներից ու ծառայություններից ուղղված կլինի երկրի ներսում արտադրվող ապրանքներին և ծառայություններին:

Սակայն պետք է նշել, ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վճարային հաշվեկշռի վերլուծության գործընթացը ներքին համախառն ծախսերի տեսանկյունից իր մեջ բովանդակում է բազմաթիվ թերություններ: Դրանցից կարելի է առանձնացնել այն, որ նշված մոտեցման կիրառման դեպքում կարող է ընթացիկ գործառնությունների հաշվեկշռի պակասուրդի պատճառները ճիշտ չմեկնաբանվեն: Հետևելով այս տեսության տրամաբանությանը, այսինքն երկրի ներքին ծախսերի և եկամուտների տարբերությանը, ճիշտ չէ պնդել, որ ընթացիկ գործառնությունների հաշվի պակասուրդը միշտ պայմանավորված է պլանավորվող ապրանքների և ծառայությունների նկատմամբ պլանային ծախսերի գերազանցմամբ: Ծախսերն ու եկամուտները կարող են հաշվեկշռված լինեն, բայց ընթացիկ գործառնությունների հաշիվը պակասուրդային կլինի կապված ազգային ապրանքների մրցունակության իջեցմամբ, տնտեսության որոշակի ոլորտներում առաջարկի ավելցուկով և այլն: Արդյունքում եկամուտները փոքր կլինեն ծախսերից ոչ թե նրա համար, որ պլանավորված ծախսերը բարձր են ստացվել, այլ որպես ազգային եկամտի նվազման հետևանք է:

Վճարային հաշվեկշռի վերլուծության քեյնսյան տեսության հիման վրա մոնետարիստները առաջ քաշեցին իրենց տեսությունը: Այսինքն՝ վճարային հաշվեկշռի վերլուծության ժամանակ մոնետարիստները ապրանքների և ծառայությունների առաջարկի ու պահանջարկի վերլուծության փոխարեն ընդգրկեցին դրամական շուկան և կապիտալի միջազգային տեղաշարժերը, փողի առաջարկն ու պահանջարկը, փողի էմիսիան և այլն: Ժամանակակից տնտեսագիտության տեսությունը վճարային հաշվեկշռի քննարկման ժամանակ լայնորեն օգտվում է վերը նշված մոտեցումներից:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վճարային հաշվեկշռի վերլուծության գործընթացը մոնետարիզմի տեսանկյունից էապես տարբերվում է ինչպես քեյնսյան մեթոդից, այնպես էլ նախորդ բոլոր տեսություններից: Հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ մոնետարիստների կողմից վճարային հաշվեկշռը քննարկվում է ամբողջությամբ, այսինքն որպես ընթացիկ գործառնությունների և կապիտալի հետ գործառնությունների հաշիվներ (իհարկե ֆինանսական գործիքների հետ միասին): Նման տեսության առաջարկումը պայմանավորված է նրանով, որ վճարային հաշվեկշռի հաշվեմացորդը դիտարկվում է որպես փողի պահանջարկի և առաջարկի միջև եղած ճեղքվածքի արդյունք, այլ ոչ թե հաշվեմացորդի մեծություն, որովհետև վերջինս մոնետար երևույթ է և կարելի է դրա վրա ներգործել դրամավարկային քաղաքականության միջոցառումների օգնությամբ: Ի դեպ, պետք է նշել, որ այդ տեսությունը ակտիվորեն օգտագործվել է ԱՄՆ-ի կողմից այն երկրների տնտեսական քաղաքականությունների մշակման գործում, որոնք հիմնախնդիրներ են ունեցել վճարային հաշվեկշռի հետ:

Ընդհանուր առմամբ վճարային հաշվեկշռի մոնետարիստական տեսությունը ուղղված է եղել բաց տնտեսություն ունեցող երկրների փողի պահանջարկի և առաջարկի միջոցով վճարային հաշվեկշռների վերլուծությանը: Այդպիսի վերլուծության շրջանակներում երկրի ներսում փողի ավելցուկ պահանջարկը կամ առաջարկը արտացոլվում է հենց վճարային հաշվեկշռի հաշիվներում: Բացի այդ, մոնետարիստական տեսությունը կառուցված է մի շարք այնպիսի նախադրյալների վրա, ինչպիսիք են կարգավորող արժույթային փոխարժեքը, լրիվ զբաղվածության կտրվածքով տնտեսության երկարաժամկետ հավասարակշռությունը, փողի պահանջարկի ուղղակի կախվածությունը ազգային եկամտից և այլն: Երկարաժամկետում գների և փոխառվական տոկոսադրույքների մակարդակները տնտեսության բաց բնույթի պայմաններում անմիջապես համաշխարհային մակարդակ են դուրս գալիս:

Դրամական զանգվածի նկատմամբ վերահսկողությունը ենթադրում է կոշտ դրամավարկային քաղաքականության վարում: Եթե դրամական զանգվածի աճը դանդաղում է, ապա փողի նկատմամբ ավելցուկային պահանջարկ է առաջանում (առաջարկի համեմատ): Փողի պահանջարկի աճը առաջ է բերում տոկոսադրույքների աճ և ծախսերի անկում: Տոկոսադրույքների աճը հանգեցնում է վճարային հաշվեկշռի բարելավմանը: Սակայն գոյություն ունեն նուրբ տարբերություններ դրամական զանգվածի աճի սահմանների և սովորական կոշտ դրամավարկային քաղաքականության միջև:

Ֆիքսված արժույթային փոխարժեքներով բաց տնտեսություններում դրամական զանգվածի ծավալը կախված է ոչ միայն կենտրոնական բանկի ձգտումներից, այն չի կարող ամբողջությամբ վերահսկել փողի առաջարկը, որովհետև ստիպված է ազգային արժույթի փոխարժեքը պաշտպանելու համար ցանկացած պահանջարկ ծածկել արտասահմանյան արժույթով: Մյուս կողմից էլ կոշտ դրամավարկային քաղաքականությունը, կապված լինելով վարկի սահմանափակման հետ, սովորաբար տնտեսական անկում է առաջ բերում:

Մոնետարիզմի տեսությունից բխում է, որ ազգային արժույթի փոխարժեքի իջեցումը՝ դեվալիվացիան, կարող է բարելավել վճարային հաշվեկշռի վիճակը միայն կարճաժամկետում: Այսպես, դեվալիվացիան իրոք բարելավում է երկրի մրցակցային վիճակը միջազգային շուկաներում, որն էլ հանգեցնում է արտաքին առևտրի դրական հաշվեմնացորդին: Համաձայն մոնետարիստական տեսության, դրական հաշվեմնացորդը տվյալ դեպքում (քանի որ դրամական զանգվածի մեծացում չի կատարվում) ուղեկցվում է փողի պահանջարկի աճով: Նման իրավիճակը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ դրամական զանգվածը չի համապատասխանելու փողի պահանջարկի նոր մակարդակին, իսկ վճարային հաշվեկշիռը չի հավասարակշռվի: Այսպիսով, դեվալիվացիան տնտեսության համար ժամանակավոր էֆեկտ է ունենում, որը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ գները և փողի առաջարկը չեն աճի ներմուծված ապրանքների և ծառայությունների առավել բարձր գները ամբողջությամբ փոխհատուցելու համար:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ մոնետարիստական տեսությունը, կապված վճարային հաշվեկշռի վերլուծության հետ, վերաբերում է ֆիքսված արժույթային փոխարժեքներին: Եթե այդ տեսությունը կիրառվի լողացող արժույթային փոխարժեքներով երկրի վճարային հաշվեկշռի նկատմամբ, ապա վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը (պաշտոնական հաշվարկների հաշվեմնացորդը) կդառնա ինքնակարգավորվող, պաշտոնական ոսկյա արժույթային ռեզերվների մեծությունը չի փոխվելու, իսկ դրամական զանգվածը ամբողջությամբ գտնվելու է մոնետարիստական տեսությունների վերահսկողության տակ:

Քեյնսյան և մոնետարիստական տեսությունների համեմատությունից պարզվում է, որ մոնետարիստական մոտեցումը իրականում անկիրառելի է վճարային հաշվեկշռի վիճակի վատթարացման պատճառների վերլուծության համար: Բանն այն է, որ վճարային հաշվեկշռի պակասուրդի պատճառը կարող է ընդհանուր ոչինչ չունենալ՝ փողի ավելցուկային առաջարկի հետ, իսկ դրա հավասարեցումը դրամավարկային քաղաքականության միջոցառումների օգնությամբ կարող է հանգեցնել անկանխատեսելի արդյունքների: Վճարային հաշվեկշռի պակասուրդը կարող է առաջանալ նույնիսկ դրամական շուկայի հավասարակշռության պայմաններում, օրինակ՝ արտահանվող ապրանքների արտաքին պահանջարկի անկման հետևանքով: Այս դեպքում դրամական զանգվածի սահմանափակումը կարող է հանգեցնել գործազրկության մակարդակի և համախառն թողարկման մեծացմանը՝ չվերացնելով վճարային հաշվեկշռի պակասուրդը:

ՍՈՍ ԼՊՈՒՏՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՎԵՐԱԴԱՐՁԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ

Տնտեսվարման նոր հարաբերություններում գտնվող յուրաքանչյուր երկիր չի կարող գոյատևել կամ զարգանալ առանց շուկայական տնտեսությանը հատուկ ենթակառուցվածքների, այդ թվում նաև բանկային համակարգի, որի հիմքում ընկած է առևտրային բանկի գործունեությունը: Շուկայական տնտեսության ամրապնդման հետ գույճընթաց անհնար է դառնում բանկի զարգացումը, եթե չի դիտարկվում նրա շուկայական ինստիտուտի դերը: Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկայիս բանկային համակարգի առջև ծառացել են լուրջ խնդիրներ, որոնց լուծումից մեծապես կախված է, թե արդյո՞ք այդ համակարգը կշարունակի գործել ու զարգանալ այնպես, ինչպես այն տնտեսապես զարգացած երկրներում է:

Այնուհանդերձ, բանկային գործունեությունը, անկախ տվյալ երկրի տնտեսության կայունության աստիճանից, ամենից շատ ռիսկ պահանջող գործունեություններից մեկն է: Բանկերի կայունության և կենսունակության հետ կապված խնդիրները կարելի է դիտարկել երեք տեսանկյունից: Առաջինը, տնտեսության ընդհանուր իրավիճակն է և նրա շարժման ուղղությունը (վերելք, թե՞ անկում): Երկրորդ՝ երկրում իրականացվող դրամավարկային, բյուջետային քաղաքականությունն է, իսկ երրորդը՝ հենց այդ բանկերի գործունեությունն է, դրանց արդյունավետությունը, ֆինանսական կշռադատված քաղաքականությունը, բանկային ռիսկերի իրական գնահատումը և դրանց նվազեցնելու նպատակով ձեռնարկվող միջոցառումները, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակը: Ահա այս երեք գործոններն են կանխորոշում բանկային համակարգում տեղի ունեցող գործընթացները:

Բանկային համակարգի կատարելագործումը առաջ է բերում նոր հիմնախնդիրներ: Այդպիսի հիմնախնդիրներից են՝ վարկային ներդրումների հետ կապված մեծ ռիսկերը և բանկային վարկի վերադարձման ապահովումը: Բանկային համակարգի անցած ժամանակաշրջանի ընթացքում կատարած աշխատանքների